



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16

3. Dendrolyre

Dark red, stiff hairs
6 mm, March 26, 1878
6 eggs - 2nd of
vgs

891.99.092	92
h-869	10.

-6 NOV 2011

Ար.

891.99.092

2-86_{թ.}

ՅՈՎԼ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

№ 16

ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԸ

ԵՐ ՆՐԱ,

ՔՈՒԶԵԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՈՒ ՍԱՅԱԹ ԴՕԳԱՅԻ

ՍԵՐԸ

23 APR 2013

67-576

ԱՐՃԱԿ ԶՈՂԱՆԵՍԱՆ.— Նազար Յովհաննան աշուղը և Յովհաննան
Յովհաննեան նկարիչը: Հրատ. Տիգրան-խան Բէլէկեանի:
Ներսէսեան տպ., Փարիզ, 1910, գինը 3 ֆր.:

,,ՀՈՐԻԶՈՆ“ 1911 թ. №№ 90—99



10765-57

Թիֆլիս
Տպարան «Մ. Ա. Մաշնուկին» Ընկերութեան
1916 թ.

Երբ ասում են թէ Ա. Չափանեանի ձեռքի տակից
դուրս է եկել մի որ և է գիրք, և միշտ էրևակայում
և սիրով ու խնամքով կատարած մի գործ, ճաշակով
ու գեղեցիկ նոյն իսկ գրքի շապիկն ու շապկի գոյնը:
Ես տեսակ մի գիրք է և նրա և Նազար Յովհաննան
աշուղը և Յովհաննան Յովհաննան նկարիչը: Նա-
զար Յովհաննան և Յովհաննան Յովհաննան: Պապն
ու թոռը: Պապը բանաստեղծ, թոռը նկարիչ: Բանաս-
տեղծի սիրոյ տաղերը, նկարչի սուրբիրի պատկեր-
ները—միասին: Մի գրքի մէջ: Երկու սիրուն ասող,
որ փայլում են մեզ 17 դարի մեր ժութն ու խաւար
երկնակամարի վրայ, իրենցից մէծ ու փոքր մի շարք
տատկերի համատեղութեան մէջ: Մռացւած են եղել
էսքան ժամանակ: Ո՞վ գլուխ որ անկիւնում, որ մինակ
բանաէքն է իմացել նրանց տեղն ու անունը, զրիչն
ու վրձինը: Սակայն ես է տաղանդաւոր զործի յատ-
կաթիւնը, զործի, որի մէջ կայ շատ թէ քիչ Աստու-

ծոյ շունչը, անմահութեան տարրը. ինչքան էլ մոռաց՝ սի ու մեղցի՝ յարութիւն է առնելու նորից: Եւ ահս էսօր, Ա. Չոպաննեանի շնորհիւ, յարութիւն առած, կան ինչպէս ինքն է ասում, անարդար մոռացումի խաւու ըէն հանած, մեր առաջն են էս երկու ազնիւ ու հարացատ գէմքերը, որ մենք ճանաչենք ինչպէս օտա՞ներ: Ի՞նչքան դառնութիւն կայ էս խօսքերի մէջ—ճանաչենք մերը ինչպէս օտարներ... Բայց երանի թմբայն էսքանը լինէր—անծանօթութիւնը: Հապա է անհասկանալի քմայքը, որ հետապնդում է մինչև թքըստոցները՝ փչացնելու, ոչնչացնելու գեղեցիկ գոծերի մնացորդները, ինչպէս արել է հանգ, Խըիմեան վշրել տալով նկարիչ Յովնաթանի գործերը, որ զադարում էին էջմիածնի տաճարը՝ յօրինելով հոյակւ տեսիլ մը մեծապահ, երփնագեղ, գարնանափա փթթինազարդ ահազին բուրաստան մը պատերն ի վ. յաւերժական թարմութեամբ ծաղկերպած... Ճշմարի ինչքան էլ մեծ լինի մարդու յարգանքը գէպի Խըի եանի յիշատակը՝ չի կարող չըսիրել Չոպաննեանի գլ արւեստագէտի էս ազնիւ զայրոյթը, որով զայրանո է նրա արարքի գէմ, խստութեամբ դատապարտե, քանզողական մոլեգնութիւնն ու քանդիչ ձեռքը: ամեն անզամ երբ նայում եմ «Աւետընկալ Մարիամ պատկերին, որ ազատւել է կորուսաից, ու հիաց մէջ միշտ ուղում եմ Մուրիլիօի Մագոննայի կողէ

նեմ՝ համեմատելու, թէ արդեօք հըն է աւելի չըքաղը էս Աստւածային կանանցից, ամեն անզամ էլ ամենում եմ նոյն բուռն զայրոյթն ու ցաւի զգացումը: Նկարիչ Յովնաթանը վրաց Հերակլ II թագաւորի ալատական նկարիչն է եղած էն ժամանակ, երբ ոյն թագաւորի պալատական երգիչն էր մեր հոյապալ Սայաթ-Նօվան: Եւ վրաց թագաւորիցն է, որ ուկաս կաթուղիկոսը խնդրում է՝ թոյլ տալ Յովնաթանին զնալու էջմիածնը շքեղազարդելու իր նկարերով: Նկարիչ Յովնաթանի և իր աշակերաների նըսպրները էջմիածնում 120-ից աւելի են եղած, իսկ յժմ հազիւ 20—30 հատ են մնացել, ինչպէս զրքի սուաջնանում գանզատւում է Չոպաննեանը:*)

Նկարիչ թոռնից թերևս աւելի բախտաւոր չի մսաստեղդ պապը, Նաղաջ Յովնաթան աշուզը, որ և կարիչ է եղել միաժամանակ: Նա էլ, անկասկած, ատ բան է կորցըել:

Հէնց Պ. Չոպաննեանը իր յառաջաբանի մէջ (էջ 6) ասում է. «Կան ալ տաղեր, որոշ հատւածներու աժանմամբ, ուր կը գտնէք տողեր՝ անկանոն՝ օրիւակչի աղաւաղման հետեւանքով: Մերթ այլ և այլ վա-

*) Պատմում են, որ նկարիչ Յովնաթանը անցել է և Պարսկաստան՝ Շահի պալատը նկարազարդելու և ճանապարհին ներքին ուղիսէ եկեղեցու պատի վրա նկար է թողել յիշատակ: Ասում Թիֆլիսում էլ կան նրա նկարներից: Յ. Թ.

բիանթներէ օգտուելով, կամ երբ շատ դիւըին եր գուշակել պակսած բառը՝ յըացուցած և տողը...»:

Եւ տյուտամենայնիւ հէնց առաջին ընթերցումից պարզ երկում է, որ գետ շատ տեղիր կան ու մնում են աղաւաղած:

Նաղաշ Յովնաթանը ծնւել է աշուղների հայրենիքում—Զանգեղորի (Սիսական) ծօռօթ տւանում 1661 թին, մեսել է 1722-ին։ Շատ աշխարհ տեսած, զիր ու վիտոթիւն սովորած, աղնիւ ու քէֆ սիրող մի անձնաւորութիւն է եղած, և շատ սիրւած իր ժամանակին։

Զգայուն սրտի տէր, հոգին մաքուք, հայեացը պարզ, իր տաղերն ել էղպէս են, նա կրտսերներից է էն փառաւոր շարքի մէջ, որի դլուխը կանգնած են Նահապետ Քոչակն ու Սայաթ-Նօվան, բայց շատ սիրուն տողեր ու տեղեր ունի ու շատ տեսալիւթներից մեծ հետաքրքրութիւն է զարթեցնում։

~~~~~

Էս բանաստեղծն էլ, իրենից աւելի տաղանդաւորների նման, տողորւած է արենելքի վառ արեի տակ, աղոքիրի գերեզմանների ու մեծ աւերաբէների վրայ ծնած՝ էն փիլիսոփայութեամբ, թէ աշխարհն ունայն է ու կանգը վաղանցուկ, «Մարդոյ» որպէս խոտոյ են տւուրք իւր, որպէս ծաղիկ վայրին՝ այնպէս ծաղիի։ Շնչէ ի նմանողմ և ոչ է, և ոչ ես երեի տեղի նորան (Սաղմոս):

Կամ ինչպէս Օմար Խայամն է ասում.

«Խելամուտ եղիր, ժամանակիդ այս մէկ վայրէ կեանին մէջ,

Թէ գուն չես այն խոտը, որ կը քաղւի և վերստին կը բումնի։ (էջ 9 (\*))

Աղա ուրեմն,

«Այսքան զոր վիշտ մի կրիր, ուրախ ապրէ,

Եւ անարդարութեան ճամբուն մէջ զուն արգութութեամբ ապրէ,

Քանի որ այս աշխարհիս հուսկ զործը չը դոյնութիւն է,

Երեակայէ թէ չը գոյես և աղատ ապրէ»։

(Օմար Խայամ)

Եւ «մի հոգացք վասն վաղւի, զի վաղիւն վասն իւր հոգացի», ինչպէս քարոզում է Յիսուսը Պաղեստինից; Էնպէս ապրեցէք, ինչպէս Պարսկաստանի մեծ բանաստեղծն է ասում.

«Երկու օրերի հոգը միտքս երբէք չը զբաղեցուց, Այն օրը, որ չէ եկած և այն օրը որ անցաւ։ Երդ, որովհետեւ էսպէս է,

«Ո՞վ կասի՞ թէ հս կուազրիմ առուտնմէն ինչ լու մութըն»

(\*.) Օմար Խայեամը տանում էր 2914 թ. Փարքիզ, «Անտեհանսակարան», Բարզմ. Գ. Փանակիր, նահապետ Քուչակը, Արշակ. Զօպաննանի հրատ. 1902 թ. Փարքիզ Սայաթ-Նօվան Ախութեղեանի հրատ. 1852 թ. Մոռկաւ

Ասածու ձեռումն հեշտ է՝ մարդու աշխարհք ել ու  
մուտքն...»:  
(Սայաթ-Նովա)

Ու

«... անյայտ է,  
Թէ այս շունչը, զոր ներս կառնեմ, դուրս պիտի  
հանեմ թէ ոչ»:  
(Օմար Խ.)

Հետևաբար՝

«Խելամուտ եղիր ժամանակիդ այս վայրկենին մէջ,  
«Լեցուր գինիին բաժակը...»  
«Մի լքաներ գիրքն ու սիրուհիին շուրթն ու  
մարդին շուրթը

Դեռ հողը քեզ չը գրաւած...»  
(Նոյն)

Եզրակացութիւնը.

Բարի եղիր, ուրիշին մի ցաւեցնիր, եթէ քո յա-  
շտենական հանգիստը կը սիրես: Աշխարհքի ցաւը  
ընկղմիր գինիի մէջ, և սիրիր.

«... քանզի

Այն օրը, որ դու առանց սիրոյ կաւարտես,  
Վատնըւած օր ատկէ աւելի չունիս դուն  
(Օմար)

Մեր համեստ Յովսաթանն էլ գիտակ է աշխարհքի  
ու կեանքի ունայնութեանը:

«Վաղիւն ոչ գիտեմք թէ գինչ ծընանի,  
Մարդու կեանքն վայրի ծաղկի նըմանի,  
Որ այսօր բացւել է՝ վաղիւն անցանի»: (Էջ 103)  
Դրա համար էլ յորդորում է.  
«Աստւած սիրէք՝ ում սրտում նախանձ կայ՝ հանի...  
Սուտ աշխարհը անցաւոր է, մութըն երազ կու-  
նմանի»... 85

«Խմենք, եղբարք, գինի, մեղ անուշ լինի,  
Ածէք, խմենք գինի, բանն Աստւած շինի:  
Թող չիման տեղ նստենք, ջուր լինի և խոտ,  
Կարմիր գինի խմենք մէկըզմէկի մօտ,  
Միմհանց նըւիրեմք վարդ անուշահոտ...  
Եւ սիրում է ուրախանալ՝ մանաւանդ երբ  
«Վերանայ ձմեռն և գայ ամառն,  
Հասանի գինին և թազայ գառըն,  
Կանաչի խոտըն և ծաղկի ծառըն  
Տերևախառն»... (Էջ 103)

Ու սիրում է:

Սիրում է մի ջանել այրի գեղեցկուհու: Սիրում  
է տարերային, իրապաշտ, մեղաւոր մի սիրով, որ և  
խոստովանում ու պատճում է ամենայն պարզութեամբ:  
Եւ բախտաւոր է իր սիրով, Գրեթէ գանդատ չունի  
«զալումից»: Հրճանքով յանգի է առնում ու երգում  
իր երջանկութեան ժամերը: Սիրած կինն էլ երեսում  
է, կենսուրախ ու լիասիրտ մի կին է եղած, և՝ ժըպ.

10

տացել է, և ծաղիկ է ձգել, և նամակ է գրել և աչքով է արել, և այցելել, և պատւելներ տւել... Շատ հիտաքրքրական է 17 դարու Զանգեզութցի էս հայ կնոջ պատկերն ու վարք ու բարքը: Եւ սիրող բանաստեղծը, որ գրեթէ նրա ամեն մի շարժումը արձանագրել է, մեղ շատ գաղանիքներ է յայտնում: Պատմում է, թէ նա ինչպէս էր իրեն մտիկ անում ու ժպտում.

«Ղէզաջ աչքով մըտիկ անես,  
Ծիծաղելով հոգոց հանես, 39  
Կամ»

Պաղճումըն ծաղիկ քաղիս,  
Ծածուկ գէպ ինձ ծիծաղիս... 36  
Ծիծաղելով աչօք կանես կուզարմանում... 44  
Ծաղիկը:

«Վարդըն ձգեցիր մէջ գողիս...  
Կարէն հետ ծաղիկ ձգեցիր... 41  
Չեր կըտերն ծաղիկ իս արել,  
Խնձորի մէջըն մեխակ շարել,  
Աղարկել ինձ բարե արել... 47  
Նամակ է գրում:

«Քո ձեռօքըն մէկ գիր իս գըրել,  
Մեխակ և շաքար մէջըն լցրել  
Ես հիւմուտ էիմ մէյլ իր գըրել  
Աղջոցայ, զալում, զալում,

Հեշտացայ, զալում, զալում: 47  
Նամակ է պահանջում:

«Ասել իս, տես՝ նազաշ տանն ա.  
Գիր ուզարկի՝ սիրտըս հովանայ,  
Ծածուկ զըրկի՝ մարդ չէմանայ...  
Գըրած եմ զալում, զալում,  
Մըհրած եմ զալում, զալում:» (Նոյն)  
Իր պատկերը նկարելու պատէր է տալիս նկա-  
րիչ բանաստեղծ սիրահարին.

«Ասել իս թէ՝ նա, որ նազաշ է,  
Գիտէ՝ ունքերըս դորադաշ է.  
Ասէք՝ սուրաթիս նման քաշէ:  
Քաշել եմ, զալում, զալում,  
Մաշւել եմ, զալում, զալում, նոյն.

Տաղեր գրելու պատւէր է տալի.  
«Ասել իս, տետրեր զըրէ տաղով,  
Ծաղկի լաջւարդ, սոկի վարազով,  
Գըրել եմ կապել բաւթայ-բանով.  
Կուզարկեմ, զալում, զալում,  
Փափագեմ, զալում, զալում:»

Մի այլ տեղ  
«Ասիր, տաղ գըրէ ինձ համբուրէ... 52  
Ուզում է այցելի.

«Խարար իս զլկել քո բերանէն,  
— Ասէք՝ շատ մի հեռանալ տանէն,

Մէկ օր գալու եմ քո քեարխանէն»:  
 Մէլով եմ զալում, զալում,  
 Սիրոյդ գինով եմ, զալում, զալում:  
 Եւ գալիս է:  
 Շաբաթ օր եկիր իմ սալամըն,  
 Զեռըդ առիր դիւիթ-դալամըն,  
 Անունս գըրեցիր էնդամըն.  
 Ինձ խեացըիր, զալում, զալում,  
 Մոլորացըիր, զալում, զալում: 48  
 «Զալումին» գերւած՝ Յովսաթանը երդում է ընդ  
 միշտ մնալ նրա գերին,  
 «Ի՞նձ հանեցիր իմ գործ ու բանէն,  
 Թամաշա կանեմ իմ այւանէն,  
 Զես թողուլ հեռանամ տանէն.  
 Քանի ես սաղ եմ, զալում,  
 Քեզի տութսաղ եմ, զալում:  
 Եւ ապրում ու երգում է էս երջանիկ գերու-  
 թեան մէջ.  
 «Ուրախ եմ, զալում, աման, ամմն»...  
 ~~~~~

Էս չարաճըն ու «սիրոյ թամահ» գեղեցկուհին
 բանաստեղծի հայրենիքիցն է: Նաղաշ Յովսաթանը,
 որ իր թոռնից առաջ կանչում էր վրաց թագաւորի
 պալատը, գրում է:

«Գիր էի գրում քո անւանըն,
 Միտք ի անում քո սիրոյ բանըն,
 Ետնէս զըրկեց *) Վախթանգ խանըն.
 Քեզ մնց մոռանամ, զալում,
 Ես մնց հեռանամ, զալում: 47
 Մի այլ տեղ կանգատում է:
 «Գիւրջըտան դարիք մնացի,
 Բո կարօտութեամբ շատ լացի...» 38
 Եւ, ըստ երեսութին, էս զալումը» մի բարեկեցիկ
 կին է, որ բարձի վրայ է նստում ու շքեղ է հաղնւում:
 Բարձին վրայ բազմիս ի մէջ դարպասին,
 Մայիլ եմ աչքերիդ, հագիդ ատլասին... 42
 Եւ Յովսաթանը, որ իր տաղերը զրել է իր ու
 նրա համար, էս տեսակ մանրամասնութիւններով է եր-
 ուս իրած կնոջը, որ գուցէ կարելի էր նկարել:
 Ահա նա—չարշափ տակ: Տարփաւոր սիրահարի
 հետ միասին ետ քաշենք չարշաւը:
 «Է՞ր ես կարմիր երեսդդ ծածկում,
 Զարշաւըն վերադ հաւաքում... 40
 Ետ բաց երեսիդ վրայ (ի) չարշաւըն... 52
 Ետ բացւեց, և ահա նատ:
 «Աչքերըդ այնախանա, ոսկեղէն սուրայ,
 Միան արտևանունքդ կապած է թուրայ... 65

*) Տպւած է՝ ուղարկես, որ անշուշտ աղաւաղած է: Յ. Թ.

Արեսըդ ալ սիահ խալ-խալ
Աւնքերըդ է քաշած փարգալ... 55,
Խալերըդ պայծառ աստեղունք, երեսդ է բոլոր
լուսին,
Սիահ ծամերըդ ընկած քո թիկունքին, քո ու-
սին... 50
Աչքերիդ քաշել ես սուրմայ... 58
Ես մայիլ եմ ծով աչքերիդ,
Սուսամբար կայ մէջ վարսերիդ,
Կունայիմ խալ-խալ պատկերիդ...
Ծիծաղելով աչօք կանես կուզարմանամ... 44
Գլխիդ ձգել ես մանախի... 36
Լաշակիդ լըրաղըն բարակ զառ գուլաբըթուն...
Ճակատիդ շարել ես ոսկի, աշբաֆի ալթուն... 61
Շըթունքըդ բարակ է, կարմիր ու փայլուն... 56
Վիզըդ ձգել ես զանջիլով հէյքալ համայիլ... 61
Սըրտիդ խառն է սամուր եախլուզ,
Ոսկի, մարջան ընկած օրթալուզ....
Նարընջի ատլաս կարճ արխալուզ...
Խթայի գօտիկ, շապիկըդ մով... 46
Զգել ես գօտիկ բարերար
Ոսկի, մարջան ու քահրուբար... 58
Մատներըդ բարակ, թափած մոմեր... 45
Կարմիր մատներ, ոսկի պուռմայ... 58
· · · Զմրութ մատանի...» 46

Կարմիր, ամբողջը կարմիր:
Եւ, էսպէս կարմիր պճնըւած, էս կարմիր, առողջ
գեղունին միշտ իրենց պարտէզի կարմիր վարդերի ու
ծաղիկների մէջն է:
«Պաղչի մէջըն ամէն օր վարդ կու քաղես,
ինձ կու տեսնես, աչքով կանես կու ծիծաղես...» 49
Վարդերն էլ Յովսաթանի համար է ըրալում:
«Առաւուսոց յօղըն կարմիր վարդին վրայ մաղած,
իմ սիրելին ինձի համար տես քանի ցեղ վարդ
է քաղած...» 50

Կամ
«Վարդըն ձգեցիր մէջ գողիս...» 41
Վերջապէս.
«Ամին առաւուս կուզաս ծաղկըներով...» 55
Իրենց սէրն էլ ալպէն կապւած գարնան է ու
վարդի հետ:
«Գարուն որ եղի, ամսոյն Ապրիլի,
Յանկարծ քեզ տեսայ իմ նոր սիրելի...» 62
Ես սիրոյ բանի չէի խասլար,
Մէկ օր ինձ տըւիր վարդի նուբար,
Սիրաս տարար քեզ բարերար.
Միսա եմ բերում, գալում,
Խիստ եմ էլում, գալում...» 46
Ես սիրոյ վիշտն ու յիշտակն էլ զարթնում
գարնան ու վարդի հետ.

«Ահա գարուն, եկաւ Մարտըն,
Կու շատանայ սիրոյ դարդըն... 45
Նոր ծաղկեցաւ այդին, եկել է գարուն,]
Էլ իմ սիրտըն կանես եարալու, արիւն... 41
Կամ՝
Վարդը որ բացւաւ
Ղաճըս շատացաւ,
Քեզնէ ի զատ, չալապում,
Ոչով չիմացաւ»: 72

10765-57

Ինչպէս տեսանք՝ գարնանը, վարդի բուրմունքի
հետ է սէրը մտել Յովիաթանի զգայուն սիրտը և իր
սիրունին էլ վարդ է արդէն—ինքը կարմիր, հագածը
կարմիր ու միշտ կարմիր վարդերի մէջ,
Հետաքրքրական է սրա սէրը մեծ նահապեան
Քուչակի սիրոյ հետ համեմատելը: Նա էլ է գարնանը՝
սիրահարւել: Նրա սէրն էլ բըլբուլի ձէնի հետ է ըն-
կել սիրտը: Նա էլ էսպէս է պատմում իր սիրոյ ծա-
գումը.

«Ան առաւօտուն լուսուն ձայնըն գայ գարնան
ձագերուն...
Զագ մի կայ՝ պուլպուլ կասեն, զինչ կամէ՝ ա-
մենն սիրու.
Զայնիկը ակընճովս ընկաւ, չի դադրիր աչերս ի
լոլու:

(Ա. Քանեակ)

Այլ տեղ.

«... Սիրու հաւն ի ձայն էած, լօք լսեց սրտիկս
ու դողաց...» (Էջ 45)

Սրա հանդիպումն էլ անկարծ ու բախտաւոր է
եղած Յովիաթանի հանդիպումի նման և խոստովանում
է իր լաւ եարին.

«... Անկարծ ինծի դէմս ելար, ես ատոր կուման
չունէի.

Զինչ մէկ մը, որ ծարւած լինի և ինքն ի պաղ
աղբիւր հանդիպի,

Դինչ գնչիկն ու խըմէ, որ սրտին թաւլուքն ան-
ցընի: 44

Կամ.

«Հընցկուն հեռաւոր էաք, զինչ լուսին ի սարք
ի դիմաց,

Եկաք մօտենոր եղաք, զինչ զջուրըդ ու ձուկըդ
հիտրաց:» 46


Յովիաթանի սիրածը մի ջահել այրի է. Քուչա-
կինն էլ սրա նման մինը:

«... Եկի հանց եարի մ'առի, որ սիրած է՝ այլուի
թողած....» 71

Եւ երկի երեխայ էլ ունի.

«Գէմ քո մանչն չէ մեռել կամ օտար երկիր գր-
նացել...» 50

Ու հօրանց տանն է առաւմ



«Իմ եարն ի հարանց տանէն հանց ելաւ՝ զի՞նչ
նաւն ի ծովէն...» 61

Ահա թէ ինչու՝ մինչդեռ Յովսաթանը իր սիրու-
հու սկսուրիցն է գանդատւում ու նըանից է գողա-
նում իր սիրոյ հաճոյքները.

«... Քանի քո ըսկեսուր տան չի,
Ե՛կ այվանըն, բեր սեղանըն,
Թեզ հետ խըմի տաղեր կանչի Յովսաթանըն» 45
Թուչակ Նահապետը շարունակ իր սիրածի մօրն
է անիծում.

«Կըրակն ի յերկնից ի վայր թող դքո մայրն ա-
մեն էրէ,
Որ զիս ի քէն ի զատ, զքեզ յիսնէ օտար կու-
պահէ: 59

Այլ տեղ.

«Բան մի դալատ արի, որ օձուն ձտգը սիրեցի.
Ես վստահութիւն արի, որ օձուն դուռը զընացի.
Օձուն մարն ալ գուրս վաղեց զիս նենդեց, որ
նոտայ լացի...» 68

Դրա համար էլ երբ ուղում է իր սիրածին տե-
սութեան գնայ, հարցմունք է զրկում ու պատասխան
ստանում.

«Իմ եարն ինձ ճուղապ երետ, թէ կացիր, լինի
իրիկուն,

«Իմ հայրս ելնէ ժամ երթայ, անհաւատ մայրիկս
չէ ի տուն»: 75

Սրա սիրածն էլ սրտաբաց ու «սիրոյ թամահ»
մի կին է ու շատ բարեհաճ գէպի սիրահարւած բա-
նասաւեղծը:

«... Այլ իմ նոնախալաս, եկիր ու նոր սէր բե-
րի...» 49

... Քանի որ մէճլիս նստիս ուներովը հետ ինձ
զրուցես... 70

«Իմ եարն ինձ հետ է եկեր...» 51
«Իմ եարն է քեարամ արել ու զրկել զմեզ հար-
ցուցել...» 54

«Զայդ պագլ, որ ի քո բերնէն դու տէիր քո
սրտի կամով...» 54

«... Այնժամ ինձ աղւոր թըւիս՝ երբ ի ձեր գուռն
կանգնես,
Դուռն ալ կիսաբաց անես, ցած հայիս, մահաբը
ծիծաղես,
Աչօքդ, ունովդ անես, զիմ ախմար իսկն կու-
տանես:» 46

Ճիշտ Յովսաթանի սիրածի նման մէկն է սա էլ.
միայն թէ նա պարտէղից, վարդերի միջից էր ժըպ-
տում, աչքով-ունքով անում, սա, պարտէղ չունի, կի-
սաբաց դոնիցն է ժպտում ու թաքուն նշաններ անում:

Նա, Յովսաթանի սիրածը կարմիր էր հազնում, ոս,
Քուչակի սիրածը—կանանչ:

«... Հագեր է գկանանչ ճիւպպէն...» 61

«... Զինչ հագեր՝ ամենն է կանանչ...» 62

Եւ Յովսաթանի սիրածն աւելի հարուտ տանից
է ու փարթամ, քան Քուչակինը: Մինչդեռ Յովսաթանը
շքեղ մետաքսէ, ոսկեթել հագուստ է նկարագրում ու
թանկագին զարդեր՝ Քուչակն ասում է.

«Բանի ու քանի կասեմ՝ մի կենար խամ լաթերով,
Գընա ապրըցում հագիր, որ նախշած է ոսկի թե-
լով...» 46

Բայց միենոյն արարածներն են երկուսի սիրածն
էլ և երկու բանաստեղծն էլ խնդրում են.

«... Ինձ շատ մի աներ, աչքաւ ունքաւ...»
(Յովնաթան, 46)

«Այդ քո ստեղծողիդ համար, երբ քայլես՝ զու-
ներք մի շարժեր...» (Քուչակ, 49)

Եւ երկուսն էլ երջանիկ են ու ամենայն իրա-
ւունքով կարող էին բացականչել.

«Քան զսէրն այլ քաղցրիկ պառող ի յաշխարհը
չհաւտամ թէ լինի...»
(Քուչակ, 63)

Եւ

«Ուրախ եմ, զալում, ամա՞ն, ամա՞ն...»
(Յովնաթան)

Եթէ երբեմն էլ տիսուր ձայներ ունեն նրանք էլ
մերժւած յուսահատի հառաջանքները չեն, այլ սիր-
ւած բախտաւորի արտույներն ու քմահաճոյքներն են:
Ագահ է սէրը, անվերջ են նրա պահանջներն ու տըր-
տունջները և տարօրինակ:

Հստեղ առաջս է գալիս Սայաթ-Նօվայի տիսուր-
ազնիւ դէմքը: Կանգնեցնենք նրան Նաղաշ Յովսաթանի
ու Քուչակ Նահապետի զւարթ պատկերների դէմքը: Ահա
թէ ով է դժբախտը սիրոյ մէջ և ահա թէ որտեղ են
մերժւած սիրոյ իսկական հատաշանքն ու տառա-
պանքը: Կանգնելու չենք սրան տանջող «բէմուրվաթի»
պատկերի վրայ, և ինքը Սայաթ-Նօվան էլ քիչ է
նկարագրում նրան, որովհետեւ աւելի շատ զբաղւած
է նրա տւած վշտով, քան թէ նրանով, Եթէ Նաղաշ
Յովսաթանի «զալումը» կարմիր էր ինքը ու կարմիր
էր հագնում ոսից դլուխ, եթէ Քուչակ Նահապետի
«խօշ եարը» ինչ հագել—ամենն է կանանչ, Սայաթ-
Նօվայի «բէուրվաթը», որի «ուանգը գուլգազի է նը-
ման» (69) ու ինքը «կրակի ծովեմէն դուս եկած՝ ուշ
ու ջէյրանի» (93), ըստ երևոյթին գուլգազ գոյնն է սի-
րում և լոկ բառախաղի համար չի, որ բանաստեղծը
իր գանգատի մէջ ասում է.

«Քուն կըրակ, հագածըդ կըրակ՝ վժւը մէ կըրա-
կին դիմանամ...» 113

Եւ ճշմարիտ որ՝ կրակ: Մինչդեռ Քուչակին ու
Յովլաթմանին իրենց սիրածները միշտ զիմաւորում են
ժայիտներով ու ծաղիկներով, մինչդեռ Նաղաշ Յովլա-
թմանը սիրոյ արբեցութեան մէջ գեղգեղում է,
«Իմ սիրելին ետ ինձ բարե»

Սըրտիս բուսաւ կանանչ տերե...»

Սայաթ-Նօվլան գանգատում է,

«... Եար, ես քիզ բարով իմ տալիս, շուռ իս
գալի՛ զալ իս անում...» 69

Ու սիրոր կոտրած խօսում է ինքնիրեն,

«... Աջար քիզ ի՞նչ գէթ իմ արի՛ կնում իս խը-
ռով, աչքի լուս.

Աշխարս աշխարով կըշտացաւ, ես քեզանից սով,
աչքի լուս. 58

Ինչ կուլի մէկ հիզըս խօսիս, թէ վուր Սայաթ-
Նօվլու եար իս... 94

Հիզըս խօսի, մի կենայ խըսովի պէս,
Տալզա տըւիր գէմիս տարար ծովի պէս.

Կու մեսնիմ, չիս տեսնի Սայաթ-Նօվլի պէս... 100

Եար, ես քիզ ի՞նչ գէթ իմ արի, նստած իս մհց-
նից բէզամաղ... 119

Աշխարումըս իմըն դռւն իս,
Բէմուրվաթ իս, մուրվաթ չունիս... 110

Դիզարէդ կարօտ մնացի՛ երկու տարին թու-
մամ է... 149

Աջար վի՞նց դիմանամ ես էսչափ դարին,
Աչքեմէս արտասունք դուրս կուգայ արին,

Օրըն իր շաբաթով կարօտ իմ եարին,.. 79
Էնդուր աչքս չի ցամաքում՝ սրտիս մէջըն արին
մնաց,

Վունչիչ դարով չըլոււացաւ՝ մըհլամըս հիգ եա-
րին մընաց.

Էշմէմէն հիւանդ պառկեցայ՝ աչքըս ճանապար-
հին մընաց,

Եփ մնուայ՝ իժում տիս էկու, նազըն բէիլըարին
մընաց... 84

Թաք իս մօրէս չէի ծընի. վայ էն օրին՝ ես քիզ
տէհայ...

Քու գարդըն ինձի պառւեցուց... 95
... Աչքեմէս ջուհարըն գնաց՝ եարէն կարօտ՝ ախ-
անելէն,

Էլ ապրելու ումիկ չունիմ, իմ օրըս կերած գի-
պինաք... 81

Եւ ահա,
Օվ տեսնում է՝ էս է ասում. վայ քու դարին,
Սայաթ-Նօվլա,

Համաշա քիզ պէտինք տեսնի՞ աչքըդ՝ արին,
Սայաթ-Նօվլա,

Ինչնիվ չէլաւ՝ չըլաստ էկար մէ լու եարին, Սա-
յաթ-Նօվլա: 82

Էս պատճառով էլ մինչդեռ բնած ժամանակն էլ
Քուչակ նահապետի ուրախ սիրտը զարթուն է ու իր
եարի ձէնն է լուում լըլլըւլի երգի մէջ.

«Գիշերս ես ի քուն էի՝ իմ սըբտիս ականջն էր
ի բաց.

Սիրու հաւսն ի ձայն էած, լօք լսեց սըտիկս ու
դողաց.

Կութըւէլ՝ իմ եարին լեզուն ան հաւին բերանն
էր դրած... 45

Սայաթ-Նօվան միանգամայն հակառակն է պատմում.
«...ես զարթուն եմ՝ սիրտս է քնած»... 93

Կամ թէ չէ.

«Սիրտս փուրումս սքւուր է,
Ալ աչկիրս լաց է անում,
Ծովըն նընդած ամբի նըման
Դոշս ու եախէս թաց է անում» 81

Ու դառնութեամբ լի կանչում է.

«Մագմմ էլ օչօվ եար չէ սիրի,
Էս ինչ արիր, էս ինչ բան ա... 58

Անիծում է իր հանդիպումը

«Վայ էն օրին, որ քեզ տէհայ...
Եւ որովհետե «սէրն է որ սէր կու բերէ», 130

«Օվ որ ինձ չի սիրի—ես էլ չիմ սիրի»:

Անպատասխան, մերժւած սէրը դադարում, մա-
րում է ժամանակի ընթացքում, սիրտն էլ՝ ասես՝ մեռ-

նում է սիրոյ հետ ու երգում է իր հրաժեշտի երգը:

«Նա» չըկայ այլևս: Եւ երբ որ «դուն չըկաս...»

«Առանց քիզ ինչ կօնիմ սոյրաթն ու սազըն,
Չեռնեմէս վէր կօծիմ չանգիրըն մէմէկ.

Զունքի ուշք ու միտքըս իրար չաղեցիր,
Փահմէս կուհեռացնիմ հանգիրըն մէմէկ:
Առանց քիզ ինչ կօնիմ աշխարհքիս մալըն...
Կուհագնիմ մազեղչն, կուհագնիմ շալըն
Կերթամ ու ման գուքամ վանքիրըն մէմէկ... 64

Վերջապէս բէզարել է.
«Աշխարըս մի փանջարա է, թաղերումէն բէ-

զարիլ իմ,
Մըտիկ տըւողն կուխուցւի, դաղերումէն բէզա-

րիլ իմ,
Էրէգ լաւ էր կանց վուր էսօր, վաղերումէն բէ-

զարիլ իմ.
Մարթ համաշա մէկ չի ըլի, խաղերումէն բէ-

զարիլ իմ...
Գուզիմ թըռչի բըլբուլի պէս, բաղերումէն բէ-

զարիլ իմ... 136

Եւ էս ամինից վերջը ահա կօռու ձորերում, Հաղ-
բատայ վանքի քարերի մէջ, անապատականի սեերում,
մազիղէն ու շալիղէն հագած, աշխարհքից ու նրա
մառախութիմներից, բէմուրվաթ եարից ու նրա նա-
ուրախութիմներից, հեռացած Սայաթ-Նօվան, մեր հոյա-
գերից բէզարած, հեռացած Սայաթ-Նօվան, Դաւիթ կըրօ-
կապ, մեր արքայական Սայաթ-Նօվան, Դաւիթ կըրօ-
նաւորի անունով:

Իմ խօսքերով պատմելու փոխարէն ես գերադա-
սեցի հէնց իրենց խօսքերով, իրենց ոճով ու շնչով,
իրենց յանգով ու երանգով՝ իրար կողքի գնել մեր հին
իրենց յանգով:

բանաստեղծներից երեքի սէրը: Հարկաւ, նրանք շատ
են խորթ ու անծանօթ մեր ընթերցող հասարակու-
թեան մեծամասնութեանը և էս տեսակ մի թուոցիկ
թիթե յօդւած էլ, որ իմ յօդւածն է, անկարող է ծա-
նօթացնել նրանց հետ, և արդէն էսպէս նպատակ էլ
չունի, բայց ամեն տեսակէտից՝ թէ գրական-պատմա-
կան, թէ լեզւական՝ էնքան են հետաքըքրական, որ
ամեն ինտելիգենտ հայ պէտք է ծանօթանայ նրանց հետ:
Երբ ծանօթանայ՝ կը սիրի:

Եւ ամեն մի ժողովուրդ պէտք է սիրի ու պար-
ծենոյ Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նօվայի նման
բանաստեղծներով: Բայց մեր խօսքը Նաղաշ Յովա-
թանի վրայ է: Ետ զանք նրան:

Քուչակ Նահապետն ու Սայաթ-Նօվան ունեն
իրենց տաղանդի և ուժի գիտակցութիւնը: Եթէ եր-
գում են իրենց սէրն ու սիրուհին՝ երգում են ամբողջ
աշխարհի առաջ, եթէ դիմում են իրենց երթին՝ պատ-
մելու նրա սէրն ու գեղեցկութիւնը՝ խօսում են
լուրջ ու հանդիսաւոր, ժամանակներին ու ժողովուրդ-
ներին ի լուր: Խորը գիտեն, որ իրենք հասարակ մահ-
կանացու չեն:

«Երազումն տեսածի հիդ մեզի մին հէտաք մի
անի...»

Առում է Սայաթ-Նօվան իր հարիսն
«Ամեն մարդ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ
զըրէն է,

Ամեն մարդ չի կանա կորդա՞ իմ զիրըն ուրիշ
զըրէն է.
Բունիաթը աւազ չիմանա՞ քարափ է, քարու-
թիթէն է...» (Սայաթ-Նօվան, 66)
«Ես ան հաւերուն էի, որ գետին է կուտ չուտէի...»
Յայտարարում է Քուչակ Նահապետը:
Սբանց նման չի Նաղաշ Յովաթանը: Նա չունի
սրանց ուժը, զբա հետ և չունի սրանց յանդզնու-
սրանց ուժը, զբա հետ և չունի սրանց յանդզնու-
սրանց ուժը: Իր բանաստեղծութիւնները յաճախ մասնաւոր
թիւնը: Իր բանաստեղծութիւնները յաճախ մասնաւոր
թիւնը: Սիրային նամակապըութեան ընաւորութիւն ունեն, և
սիրային նամակապըութեան ըն չի, որ ձէնը համնի հե-
կիթէ երգում է, նպատակն էն չի, որ ձէնը համնի հե-
կիթէ երգում է, այլ իր առավանձն մինչև սիրածի վար-
ուու դարերին, այլ իր առավանձն մինչև սիրածի վար-
ուու դարերին: Դրանից է ի միջի այլոց, որ նա
գումիթիթ պարտէզը: Դրանից է պատմում, որոնք մի
էնքան մանրամասնութիւններ է պատմում, որոնք մի
էնքան լինդանութիւն ու թարմութիւն են տալիս
իրա երգիբից մի քանիսին:

Բացի սիրային երգիբից Նաղաշ Յովաթանը մի
քանի ուսանաւորներ էլ ունի՝ ուրախութեան սեղանի
քանի ուսանաւորներ էլ ունի՝ ուրախութեան սեղանի
թերի, երեանի կեղտի ու Թիֆլիսի գեղեցկուհների
կրայ յօրինած:

Գիրքը վերջանում է Նաղաշ Յովաթանի Յակոբ
որպու ողբերգով հօր մահաւան վրայ:

Ա. Զարանիանը, որ էնքան սէր ունի դէսի մեր
հին գեղարւեսալ և նորը ճաշակով ու հոտասութեամբ
մին գեղարւեսալ և որորը ճաշակով ու հոտասութեամբ
մինելու հետամաւած է որոնելու, զանելու մեր մեռած տա-
միշաւած հետամաւած

դանդների կենդանի գործերը և հանդէս դնելու ամենայն զգուշաւորութեամբ ու խնամքով, նաղաշ Յովնաթանի վերաբերութէամբ էլ արել է նոյնը:

Համեմատել է զանազան ձեռագիր ու տպագիր վարիանտներ, համեմատութեան տարբերութիւնները նշանակել է ծանօթութիւնների մէջ, արաբերէն, թուրքերէն, պարսկերէն բառերի բառարանը կաղմելիս դիմել է հմուտ մարդկանց — գոկտ. Կ. Թիրաքեան խանի, Յ. Գրպահեանի և Մաքսուտեանի օգնութեանը: Բայց էս տեսակ գործերը, ինչքան էլ խնամքով կատարեն, միանգամայն անկարելի է վերակազմել ու հրապարակ դնել անթերի: Եւ ինձ թւում է, որ տակաւին շատ բառեր ու ձեռք են մնում աղաւաղած ու անմեկնելի, և շատ բառեր էլ կան սխալ բացատրած:

Մի քանի օրինակ,

Առաջին երգը՝ (էջ 35) սիրուհուն դիմելով առւմ է.

«Հէքիմէս գանդատ կանեմ»:

Պէտք է լինի. «Հէքիմ ես՝ գանդատ կանեմ»:

Էջ 45 ասում է.

«Մայիլ եմ աչքերիդ, հագիր ատլասին»:

Պէտք է լինի. «... հագիդ ատլասին»:

Էջ 93 ասում է.

«Թալանեցէք տօլապ տարեք»:

Պէտք է լինի. «Թալանեցէք տօլապ, բարեք»:

Նոյն երեսում. «Մաժի գոէք, փանար վառէք»:

Պէտք է լինի.

«Մաժիկ դրէք...»: Ժողովրդական ոճ է, որ կը նըշանակի՝ ճանապարհ դրէք:

Էջ 97 ասում է. «Դրէ եկին...»

Պէտք է լինի. «Դրէ եկին...»

Էջ 38 ասում է.

«Վեր հափր գիբա զարբաֆըն», որ կը նշանակի վեր կաց, հագիր, բացատրած է՝ վրայէդ հագիր:

Էջ 47 ասում է.

«Ես հիւանդ էի մէլլիր գրել,

Ողացայ, զալում, զալում»:

Ծանօթ. մէջ բացատրած է՝ հաճեցար գրել: Կարծում եմ մէյլ և իր առանձին պէտք է կարդալ — մէյլ իր գրել, մէյլ էյր գրել: Եւ մէյլ աւելի հաւանական է արաբական մէյլ բառը լինի, որ կը նշանակէ սէր, համակրանք, մտերմութիւն, այլ և գործ է ածւում սիրտ տալու մտքով: (Будаговъ, сравн. словарь туркотатарск. нарѣч.): Իսկ մէլ, 48 երեսում, թարգմանած է փափագ, որ նոյնպէս սխալ է թւում: Մէլ մեր բարբառներում յոյսի իմաստն ունի: Մէլով անել կը նշանակի յոյս տալ: Հէնց Յովնաթանի երգերում՝ սիրուհին խօսք է տւել որ պէտք է գայ, և անա բանաստեղծը ասում է.

«Մէլով եմ, զալում, զալում»:

Դեսուր, թարգմանած է օրէնք, արտօնութիւն: Դաստուր գործ է ածւում և իրաւունքի, և հըրա-

մասի, և ճանապարհի խմաստով: ՅԵ ենում ասում է:
«Դաստուր տայր խանըն, նստեմք ձիանըն դէպ
մեր վաթանըն»:

Եմիք թարգմանած է՝ միրգ: Եմիշ և սեխ կը
նշանակի:

Նիշակ բառը թարգմանած է՝ շիշի խորոված:
Շիշակ կը նշանակէ ջահէլ:

Մեր ջանգիւլումների մէջ ասում է.

«Իմ եաբը քանց քեզ ժիշակ աւելի
շատ գործ է ածւում ոչխարի ու տաւարի համար: Եւ
այդ մաքով էլ գործ է ածիլ Յովիաթանը իր պրբում:
Ասում է.

«Զէնէք թաղայ գառն ու ժիշակ»: Էջ 92

Տօլապը թարգմանած է անիւ, նենդ, գարան:

Տօլապ կամ գօլաբ՝ կը նըշանակի պահարան:
Էջ 93 երգի մէջ ասում է,

«Ճանակըն խօսում չի, միտք արէք, թալանհցէք
տոլապ տարէք»: Տօլապ տարէքն էլ պէտք է լինի՝ գո-
լաբ, թարէք:

Կալամենարը թարգմանած է քանդակագործ:
Կալամընար կամ խուէմքեար կը նշանակի փորազրիչ:
Պրանից էլ՝ տպածոյ չիթ. (Հը, Անասիան, Թուրքերէնէ
փոխառեալ բառեր հայերէնի մէջ):

Կուման թարգմանած է տարակոյու: Բայց
գործ է ածւում և կարծիքի մաքով և յոյսի: Օրինակ՝
Էջ 50 ասում է, «Քեզնէ զատ էլ չունիմ կոման»:

Բողազ թարգմանած է պարանոց: Բողազ կը
նշանակի և կոկորդ և կիրճ:

Մուշկուր թարգմանած է գժւար, գժնդակ:
Բայց կը նշանակի և մոլոր, հարբած: Էջ 58 ասում է:

«Երբոր կուտեսնիմ երեսիդ խալըն,

Մուշկուր փարիշան կը լինի իմ հալըն»...

Հարբած, մոլորւած, ցրւած կը լինի իմ վիճակը,
իմ դրութիւնը:

Բաղան (պատան) թարգ. է մարմին, մեզա-
նում կոնքի և լսնջ ու թիկունքի (ճյօտե և տաշ)
իմաստն ունի, աւելի շատ ճյօտե-ի: Հէնց զրբի մէջ,
Էջ 106, եթէ չիմ սխալում, միակ տեղը, որ բաղան
զործ է ածւում, էն երգի մէջն է, որ գովում է Թիփ-
լիսի գեղեցկուհիներին: Ասում է.

«Բաղանըն լայն, մէջքըն բարակ»:

Կան նաև բառեր, որոնց նշանակութիւնը չեն
իմացել ու դրել են հարցականով: Օրինակ Էջ 39 եր-
գիչն ասում է.

«Ղեղաջ աչքով մտիկ անես,

Ծիծաղելով հոգոց հանես:

Ծանօթութեան մէջ հարց է զրած՝ թիրևս շեղաչ,
շեղահայեաց: Ոչ, միտքը ճիշտ է զուրս եկել, բայց
շեղաչ չի, այլ ղեղաջ և հէնց էդ իմաստն էլ ունի՝
շեղահայեաց, ինչպէս ասում են՝ աչքի պոչով նայելը:

30

մա

հ2

Շ

2

ա

Ց

Ղանաղան թարգմանել են արիւն թափող, արս
եան ծարաւի և նոյնպէս հարցական են դրել Ղանա-
ղան հէնց էդպէս էլ գործ է ածւում՝ արեան թշ-
նամի, Բանաստեղծն իր սիրուհուն ասում է, էջ 63,

«Ինձ հետ մի կենալ ինչպէս դանազան...»

Հարութակ բասի բացատրութիւնը, (էջ 92) դրած
է հարիսայ դարձեալ հարցականով, Հարուշակ կամ
հըրուշակ հալւան է, Զօկերն էսօր էլ հրուշակ են
ասում:

Սակայն էս և սրանց նման նկատողութիւնները
գալիս են մի բան ասելու, որ հեշտ չի, ինչպէս վերեն
էլ ասինք, միանգամից անթերի վերականգնել մի
գործ, որ աղաւաղել ու աղճատել են հարիւրա-
ւոր ձեռքեր ու հարիւրաւոր տարիներ: Եւ, գիտակ-
ցելով էս ամեն դժուարութիւնները, լիասիրտ շնոր-
հակալ պէտք է լինենք պ. Չոպանեանից, որ իրար
ետեից մոռացութեան խաւարից հանում է էս տեսակ
գործեր ու դնում մեր առաջը, որ ճանաչենք մերը՝
ինչպէս օտարներ...»



ՀՀ Ազգային գրադարան



NL0388187

67,576